## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-2-1

ք. Երևան 27.04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊժԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազիզյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, ՀՀ ՊՆ ՌԱՊԿ զինվորական ներկայացուցչության բաժնի N 37 ԶՆ կողմից

տված եզրակացության հիման վրա, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: :

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից (5) հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գումարը, կազմում է 12 000 000 /տասներկու միլիոն / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է՝ 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչությունը: :

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Սիլիկյան թաղ., 5-րդ փողոց, տ. 58 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | "Անելիքբանկ" ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 118001197219 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01835789 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ | Տնօրեն |
| Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ԱԶԻԶՅԱՆ |

**Հավելված N 1**
**ՄԱԾՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1. | վարժասարքերի նորոգման ծառայություններ (Տ-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | Համաձայն վարժասարքերի շահագործման ձեռնարկի պահանջների, վարժասարքերի աշխատունակության լիովին ապահովում: |

Ծանոթություն:Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումը իրականացվում է կազմակերպության արտադրամասում կամ վաժասարքի շահագործման վայրում:Պահանջվում է մեկ տարվա երաշխիք:

### ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ դրամ**

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Նորոգման ծառայությունները 2018թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում՝ ըստ ՄՊՎ հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. Առավելագույն գումարը |
|---|---|---|---|
| 1 | վարժասարքերի նորոգման ծառայություններ ( Տ-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | դրամ | 12000000 |
| Տ-72 տանկի համալիր վարժասարքի նորոգում | | | |
| *Հրահանգչի մոդուլ* | | | |
| 1 | Հրահանգչի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 2 | Հրամանատարի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 3 | Նշանառու-օպերատորի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 4 | Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 5 | Հոսանքի անխափան սնուցման սարքի փոխարինում | հատ | 50000 |
| 6 | Բարձրախոս համակարգի փոխարինում | հատ | 37800 |
| 7 | Մոնիտորների ինտերֆեյսային փոխարկիչների փոխարինում | հատ | 15000 |
| Մարտական բաժանմունքի մոդուլ | | | |
| Ա.Հրամանատարի մոդուլ | | | |
| 1 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11400 |
| 2 | ТКН-3 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 111220 |
| 3 | Աջ բաժանարար վահանակի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 12350 |
| 4 | КА-1С սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 6940 |
| 5 | Բեռնավորման վահանակի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 21220 |
| 6 | БВ-34 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2500 |
| 7 | МТ2 սարքի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2500 |
| 8 | Հրամանատարի մոդուլի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1118120 |
| Բ.Նշանառու օպերատորի մոդուլ | | | |
| 1 | 1А40 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 319460 |
| 2 | 1К13 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 75000 |
| 3 | Թնդանոթի վերելքի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64450 |
| 4 | Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64450 |
| 5 | Ազիմուտային ցուցիչ շարժիչի փոխարինում, էլեկտրոնային արդիականացում | հատ | 67800 |
| 6 | Կայոնիկի լարաբերման մեխանիզմի տվիչների և մեխանիզմի փոխարինում | հատ | 162950 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | A3 կառավարման վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251680 |
| 8 | Կողային գործակիցների բլոկի էլեկտրոնային արդիականացում | հատ | 7920 |
| 9 | Ձախ բաժանարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 12360 |
| 10 | БВ-35 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 11 | Ճշգրտումների ներմուծման սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 4180 |
| 12 | Կառավարման վահանակ 902-ի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16530 |
| 13 | MT2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 14 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11400 |
| 15 | Նշանառու օպերատորի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1500000 |
| Կառավարման մոդուլ | | | |
| 1 | Դինամիկ հարթակի տվիչների փոխարինում | հատ | 212980 |
| 2 | Դինամիկ հարթակի շարժիչ ռեդուկտորի վերանորոգում | հատ | 150000 |
| 3 | Դինամիկ հարթակի փոխարկիչների փոխարինում | հատ | 160000 |
| 4 | Դինամիկ հարթակի էլեկտրոնային բլոկի արդիականցում | հատ | 807900 |
| 5 | Մոնիտորի ինտերֆեյսային մալուխի փոխարինում | հատ | 11400 |
| 6 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32400 |
| 7 | Փոխանցման տուփի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32400 |
| 8 | БВ37 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 9 | Օդամղիչ սարքի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32400 |
| 10 | Ոտնակ ( Педаль Подачи Топлива) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 11 | Ոտնակ ( Педаль Сцепления) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 12 | Ոտնակ ( Педаль Тормоза) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 13 | MT2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 14 | Հովացման մեխանիզմի իմիտատորի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 15 | Շրջադարձի բռնակի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 16 | Վառելիքային ծորակի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 17 | Վառելիքի մատուցման մեխանիզմի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 18 | PHM սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 32400 |
| 19 | Մեխ/վարորդի ստուգիչ սարքերի վահանակի էլեկտրոնային արդիականցում | հատ | 633600 |
| 20 | Մեխանիկ վարորդի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1613410 |
| 21 | Ծավալային մոնտաժ՝ կեմերի փոխարինում | հատ | 664410 |
| ՀՄՄ-2 համալիր վարժասարքի նորոգում | | | |
| *Հրահանգչի մոդուլ* | | | |
| 1 | Հրահանգչի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 2 | Հրամանատարի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 3 | Նշանառու-օպերատորի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 4 | Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625000 |
| 5 | Հոսանքի անխափան սնուցման սարքի փոխարինում | հատ | 50000 |
| 6 | Բարձրախոս համակարգի փոխարինում | հատ | 37800 |
| 7 | Մոնիտորների ինտերֆեյսային փոխարկիչների փոխարինում | հատ | 15000 |
| Մարտական բաժանմունքի մոդուլ | | | |
| Ա.Հրամանատարի մոդուլ | | | |
| 1 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11400 |
| 2 | TKH-3 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 111220 |
| 3 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251670 |
| 4 | 1П3- սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 85000 |
| 5 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251680 |
| 6 | БВ-34 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2500 |
| 7 | MT2 սարքի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2500 |
| 8 | Աշտարակի կանգունակի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 9 | Հրամանատարի մոդուլի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 894500 |
| Բ.Նշանառու օպերատորի մոդուլ | | | |
| 1 | Դինամիկ հարթակի վերանորոգում | հատ | 1805720 |
| 2 | БПК 2-42 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 170000 |
| 3 | Թնդանոթի վերելքի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64450 |
| 4 | Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64450 |
| 5 | Ազիմուտային ցուցիչ շարժիչի փոխարինում, էլեկտրոնային արդիականացում | հատ | 67800 |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Կացյոնիկի լարաբերման մեխանիզմի տվիչների փոխարինում | հատ | 50000 |
| 7 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251680 |
| 8 | БВ-35 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 9 | БУ-25-2С սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 250000 |
| 10 | 902 Կառավարման վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16530 |
| 11 | КР-60 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16530 |
| 12 | ПКТ իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 14250 |
| 13 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 14 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32400 |
| 15 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11400 |
| 16 | Նշանառու օպերատորի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 950000 |
| Կառավարման մոդուլ | | | |
| 1 | Դինամիկ հարթակի վերանորոգում | հատ | 1805720 |
| 2 | Մոնիտորի ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11400 |
| 3 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32400 |
| 4 | Ղեկի և փոխանցման տուփի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 27000 |
| 5 | БВ37 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 6 | Ոտնակ ( Педаль Подачи Топлива) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 7 | Ոտնակ ( Педаль Сцепления) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 8 | Ոտնակ ( Педаль Тормоза) տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 9 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2500 |
| 10 | Հովացման մեխանիզմի իմիտատորի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 11 | Վառելիքային ծորակի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 12 | Վառելիքի մատուցման մեխանիզմի տվիչի փոխարինում | հատ | 32400 |
| 13 | Մեխ/վարորդի ստուգիչ սարքերի վահանակի էլեկտրոնային արդիականցում | հատ | 633600 |
| 14 | Մեխանիկ վարորդի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 500000 |
| 15 | Ծավալային մոնտաժ՝ կեմերի փոխարինում | հատ | 400000 |

Ծանոթություն:Վերանորոգումն իրականացվում է ԶՈՒ ՄՊ վարչության հայտերի հիման վրա, ըստ փաստացի պահանջարկի, ընկերության արհեստանոցում, կամ վարժասարքի շահագործման վայրում:

Ծառայությունների մատուցման վճարումը կատարել ըստ փաստացի ծախսերի գնահաշվարկի:

**Հավելված N 2**
**ՄԱԾՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի**

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

***ՀՀ դրամ***

| Հ/հ | Ծառայության անվանում | CPV-ի կոդը՝ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Վարժասարքերի նորոգման ծառայություններ (S-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | 50871100/1 | 3875000 | 3875000 | 3875000 | 7750000 | 7750000 | 7750000 | 12000000 | 12000000 | 12000000 |

*Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ

Տնօրեն

ԱԶԻԶՅԱՆ

Հավելված N 3
**ՄԱԾՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| ՀՀ ______________________ | ՀՀ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ՀՎՀՀ ______________________ | ՀՎՀՀ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
*Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________________ և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**ՄԱԾՁԲ-2-1ծածկագրով գնման պայմանագրի**

## ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. —— -ին կնքված N ——————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ——— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________ ________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

________________ ________________
ստորագրություն ստորագրություն

Հայաստանի Հանրապետություն

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## № 291 Ս

Հայաստանի Հանրապետության
մտավոր սեփականության գործակալությունը
օրենքի համաձայն տվեց
Տանկի համալիր վարժասարք
օգտակար մոդելի այս արտոնագիրը

**ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ** «ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ

**ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)** Ա. Ազիզյան

ՀԱՅՏԻ № AM20110149U

Ներկայացման թվականը 28.10.2011

Օգտակար մոդելի առաջնությունը 28.10.2011

Գրանցված է պետական գրանցամատյանում 25.05.2012

Գործակալության պետ

Արտոնագիրը գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում

Հայաստանի Հանրապետություն

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

**№ 434 U**

*Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը օրենքի համաձայն տվեց*

***ՀՄՄ-2-ի համալիր վարժասարք***

*օգտակար մոդելի սույն արտոնագիրը*

***ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ*** «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ

***ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)*** Ռադիկ Վանիկի Վանունց

| | |
|---|---|
| **ՀԱՅՏԻ №** | AM20150018U |
| Ներկայացման թվականը | 24.02.2015 |
| Օգտակար մոդելի առաջնությունը | 24.02.2015 |
| Գրանցված է պետական գրանցամատյանում | 25.12.2015 |

Գործակալության պետ

Արտոնագրի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում